Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ '' ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեք գյուղի միջնակարգ դպրոց,,ՊՈԱԿ-ի թվային գրագիտություն և համակարգչային գիտություն/3դասաժամ/ ,Ինֆորմատիկա/4 դասաժամ/ թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի :

Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում/Ձև1/,

-մեկ լուսանկար3*4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ/դիպլոմ/,

-անձը հաստատող փաստաթուղթ,

-''Հանրակրթության մասին'' ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան ՝աշխատանքային գրքույկի պատճենը /առկայության դեպքում/,

-ինքնակենսագրություն /Ձև 5/,

-այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր/առկայության դեպքում/,

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթեր բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի հունվարի 10-ից մինչև 23-ը ներառյալ, ամեն օր՝ժամը 10:00-ից մինչև 16:00-ն,բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հունվարի 26-ին՝ժամը 13:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Շատջրեք գյուղի միջնակարգ դպրոցում:Հասցեն՝ գ.Շատջրեք,առաջին փողոց շենք 3:

Տեղեկությունների համար զանգահարել ՝094-87-01-83 հեռախոսահամարով: